

## **ՀՀ Արմավիրի մարզպետ Յամբարձում Մաթևոսյանի շնորհավորական ուղերձը Վերջին զանգի կապակցությամբ**

24.05.2019

Սիրելի շրջանավարտներ,  
Լավագույն ցանկություններով շնորհավորում եմ ձեզ դպրոցական ուսումնառության ավարտն ազդարարող տոնական օրվա՝ Վերջին զանգի կապակցությամբ:

Այս խորհրդանշական օրը դուք միշտ հիշելու եք: Հիշելու եք սիրով, հուզմունքով, հպարտությամբ, երբեմն էլ՝ ափսոսանքով: Սակայն մեծ կյանք տանող ճանապարհին թող ոչինչ չընկճի ձեզ ձեր ուղին յուրովի հարթելու և արդարացիորեն առաջ ընթանալու գործում:

Լինելով մեր նորօրյա պատմության հերոսական դրվագների ոգով կրթված ու դաստիարակված սերունդ՝ դուք օժտված եք առավել ազատ ու անկաշկանդ մտածողությամբ և հաջողությունների հասնելու մեծ վճռականությամբ: Եվ հենց սա է դառնալու ձեր երազանքներն իրականություն դարձնելու ամենակարևոր հաղթաթուղթը:

Ես վստահ եմ, որ անկախ հասարակության մեջ ձեր զբաղեցրած դիրքից, պաշտոնից, դուք դառնալու եք մեր պետության արժանավոր զավակները՝ կարևոր ներդրում ունենալով նաև մարզի զարգացման և հզորացման գործում:

Սիրելի շրջանավարտներ,  
Կրկին շնորհավորելով ձեզ, ձեր ծնողներին և ուսուցիչներին այս հանդիսավոր օրվա առթիվ՝ մաղթում եմ հաջողություններ բոլոր բարի ու նվիրական նախաձեռնություններում:

Բարի երթ դեպի նոր կյանք: